| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1262 | բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝ | 7400 | 8 943 000,00 | 8 943 000,00 | 0,00 | 8 943 000,00 | 8 943 000,00 | 0,00 | 6 929 024,60 | 6 929 024,60 | 0,00 |
| 1310 | 3.1 Տոկոսներ այդ թվում՝ | 7411 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1311 | Օրենքով նախատեսված դեպքերում բանկ. համայնքի բյուջեի ժամ. ազատ միջոց-ի տեղաբաշխ-ից և դեպոզիտ-ից ստ.տոկոսավճար- | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ այդ թվում՝ | 7412 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1321 | Բաժնետիր. ընկեր-ում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժին-ր) | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝ | 7415 | 2 600 000,00 | 2 600 000,00 | X | 2 600 000,00 | 2 600 000,00 | X | 418 321,60 | 418 321,60 | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 2 600 000,00 | 2 600 000,00 | X | 2 600 000,00 | 2 600 000,00 | X | 418 321,60 | 418 321,60 | X |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1333 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությունը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343) այդ թվում՝ | 7421 | 5 343 000,00 | 5 343 000,00 | X | 5 343 000,00 | 5 343 000,00 | X | 5 361 100,00 | 5 361 100,00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1341 | [illegible] (բաց. հիմն. միջոց, ոչ նյութ. կամ բարձրարժեք ակտիվ հանդիս., ինչպես նաև համայնքի պահուստ. պահվող սարքավ. արժեք.) վաճ-ից մուտքեր | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 5 343 000,00 | 5 343 000,00 | X | 5 343 000,00 | 5 343 000,00 | X | 5 361 100,00 | 5 361 100,00 | X |
| 1343 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352) այդ թվում՝ | 7422 | 1 000 000,00 | 1 000 000,00 | X | 1 000 000,00 | 1 000 000,00 | X | 153 900,00 | 153 900,00 | X |
| 1351 | Տեղական վճարներ | | 1 000 000,00 | 1 000 000,00 | X | 1 000 000,00 | 1 000 000,00 | X | 153 900,00 | 153 900,00 | X |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362+տող 1363) այդ թվում՝ | 7431 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1362 | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1363 | Համայնքի բյուջեի մուտքեր այլ իրավախախտումների համար տուգանքներից և պատժամիջոցներից | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372) այդ թվում՝ | 7441 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1371 | Ֆիզ. անձ. և կազմ. ներդրումներ-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.)իրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝ տրամ. արտ. աղբյուր-ից | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 1372 | Ֆիզ. անձ. և կազմ. ներդրումներ-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.)իրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝ տրամ. ներք. աղբյուր-ից | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1380 | [illegible] 1381 + տող 1382) այդ թվում` | 7442 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1381 | Նյութ, ժամանց. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և [illegible] | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1382 | Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և [illegible] | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում` | 7452 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 995 703,00 | 995 703,00 | 0,00 |
| 1391 | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 995 703,00 | 995 703,00 | 0,00 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 11*

## *ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

<<Բարձրավոլտ էլեկտրացանցեր >> փակ բաժնետիրական ընկերությունը Եղեգնաձոր համայնքի բնակչից սեփականության իրավունքով ձեռք է բերել Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1 միավոր վարելահող 361 քմ մակերեսով 'ըստ հետևյալ կադաստրային ծածկագրի 10-001-0338-0007:

Հողամասի ձեռքբերման հիմնական նպատակը ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող <<Էլեկտրակառավարման հուսալիություն>> ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էեկտրական հենասյուների կառուցումն ու սպասարկումն է :

Վերը նշված ծածկագրով հողամասում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշած գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի,կապիտրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի :

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով .

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է'*

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.06.2014թ. <<Էլեկտրակառավարման հուսալիություն>> վարկային ծրագրի շրջանակներում <<Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման մասին >> թիվ 599-Ն որոշման պահանջները, ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող <<ԲԷՑ>> ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 10-001-0338-0007 կադաստրային ծածկագրով վարելահողը՝ 361 քմ մակերեսով փոխադրել էներգետիկայի,կապի ,տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածների օբյեկտների հողերի

կատեգորիա՝ ՎՁՄԲ կողմից ֆինանսավորվող <<էլեկտրակառավարման հուսալիություն >> ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար :

2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 12 -Ն*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 30-րդ կետի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛*

Հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը /կցվում է/ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱՐՈԴՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հաստատում եմ՝
Եղեգնաձոր համայնքի ղեկավար

Գ.Խ.Հարությունյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

.Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

**(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

Ըստ պատմական աղբյուրների Եղեգնաձորը միջնադարում անվանվել է Փոնձաթաղ, Միառորալեզ, հետագայում նաև Եղեգիք, Եղեգյաց, 19-րդ դարի սկզբներից՝ Քեշիշքենդ: 1935թ-ին Քեշիշքենդը վերանվանվեց Միկոյան, 1958թ-ից՝ Եղեգնաձոր:

Եղեգնաձոր քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա, բնակչությունը կազմում է 9394 մարդ :




Քաղաքում գործում է 3 հիմնական դպրոց, 3 մանկապարտեզ, քաղաքային վարժարան, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, գեղարվեստի դպրոց, երաժշտական դպրոց, մարզադպրոց, մշակույթի տուն: Քաղաքում գործում են նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ <<Գիտելիք>> համալսարանը, Երևանի Տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղը :

Այստեղ են անցկացվում ամենամյա հանրապետական մասսայական մշակութային միջոցառումները, տոները, տոնախմբությունները՝ <<Բերքի տոնը>>, հեղինակային երգի, գինու փառատոնները:

2012թ. Եղեգնաձոր քաղաքում մասսայական մշակութային միջոցառումների քանակը 112-ն է, մասնակիցներինը 272 000 մարդ:

Ընթացքում է 2013թ. աշնանը Եղեգնաձոր քաղաքում համահայկական հեղինակային երգի ամենամյա ավանդական փառատոնի վերականգնման և կազմակերպման ծրագիրը:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Եղեգնաձոր համայնքի պատմամշակութային հուշարձանների պահպանման նախագծի պահպանական գոտիների և դրանց օգտագործման պայմանագրերի մշակումը իրականացված է „Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին՛„ , „՛Քաղաքաշինության մասին՛ „ ՀՀ օրենքների և ՀՀ հողային օրենսգրքի կիրառումն ապահովելու համար:

Համաձայն „՛Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին՛„ ՀՀ օրենքի հուշարձանների պահպանական գոտիների՝ համակարգը իր մեջ ներառել է.

ա/ հուշարձանների պահպանության գոտիները,

բ/ կառուցապատման կարգավորման գոտիները,

գ/ լանդշաֆտի պահպանման գոտիները,

որոնցում սահմանվել է օգտագործման պայմանակարգը /ռեժիմը/:

### ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

Հուշարձանների կառուցապատման կարգավորման գոտին ուրվագծված սահմանով պարփակված տարածք է, որում սահմանված են քաղաքաշինական և ճարտարապետական սահմանափակումները և պահանջները: Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգում կառուցապատման կարգավորման գոտիների սահմանումը կարող է ապահովել քաղաքի հատվածների հետագա կառուցապատման ծրագրերի իրականացումը պատմական միջավայրի և հուշարձանների քաղաքաշինական և ճարտարապետական սկզբունքներին համապատ:

*Հավելված 1*

***Եղեգնաձոր համայնքի պատմամշակութային հուշարձանների ցանկ***

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ռամբարանադաշտ | մթա2-րդ 1 հզմ | հվ-աե մասում | | Հնավայրի հարավային եզրով անցնում է Եղեգնաձոր-Վայք մայրուղին | 12.7 հա |
| 2 | | | | Մատուռ Ս. Հովհաննես | րդ դդ. | մասում | | Եղեգնաձոր-Ագարակաձոր ճանապարհի աջ եզրին | 0.037 հա |
| 3 | | | | Եկեղեցի Սուրբ Սարգիս | | | | Նարեկացի փողոցին կից | 1.9հա |
| 4 | | | | Ամրոց Քյոշք | 1-5դ. | հվ-ամ | | Նարեկացի փողոցին կից | |
| 5 | | | | Գերեզմանոց խաչքարերով | 13-20 դդ | ամ | | Արսենյան փողոցին կից | 1.25հա |
| 6 | | | | Հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1970թ | հս ար | | Շահումյան փ. կից | 0.86հա |
| 7 | | | | Երկրագիտական թանգարանի շենք | 1957թ | հս ամ | | Շահումյան փ. կից | 0.17հա |
| 8 | | | | Հուշարձան Եսայի Նշեցուն | 1980թ | հա.ամ | | Երնանյան խճ և Միկոյան փ. կից | 0.09հա |
| 9 | | | | Հուշարձան Անաստաս Միկոյան | 1947թ | ար | | Նարեկացի փողոցի կից | 0.37հա |
| 10 | | | | Հուշարձան Խորհրդային կարգերի հաստատման համար զոհված մարտիկներին | 1971թ. | հս ամ | | | 0.17հա |
| 11 | | | | Վիշապաքար | Մ.թ.ա. 2հզմ | Հվ | | Մոմիկի անվան քաղաքային այգում | 0.09հա |
| 12 | | | | Ագարակաձորի կամուրջ | 12-րդ դ. | Հվ | | Դեպի Ագարակաձոր տանող ճանապարհի աջ կողմում | |



<u>Հուշարձան Եսայի Նշեցի</u>



<u>Երկրագիտական թանգարան</u>



*Ագարակաձորի կամուրջ*



Հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհվածներին

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի նպաստավոր դիրքը, ռեկրեացիոն ռեսուրսները և արտակարգ գեղատեսիլ բնությունը հարմար են հանգստի, զբոսաշրջության, սպորտի գործառույթների հիմնման և զարգացման համար: Հիմնական բնակչության հեռանկարային աճը որոշելու համար որպես առաջնային գործոն ընդունվել են համայնքի տարածական զարգացման հնարավորությունը, դեմոգրաֆիական զարգացումների միտումները, քաղաքի արտադրական ձեռնարկությունների հեռանկարային ծրագրերը, նախատեսվող ռեկրեացիոն գոտու սպասարկման ոլորտում առաջացող աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները: Համայնքի բնակչության առավելագույն հեռանկարային թիվը ընդունվել է 12 000 մարդ /համայնքի գլխավոր հատակագծի գործողության /25 տարի/ կտրվածքով/:

Բնակավայրի տարածքի հատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները՝

քաղաքի առկա հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի միջև հարմարավետ և ներդաշնակ հատակագծային կապերի ստեղծում,

համայնքի զարգացումը խթանող նոր գործառնական գոտիների ստեղծում՝ հիմք ընդունելով առկա ռեսուրսային հնարավորությունները,

արտադրական և կոմունալ օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական պահպանական գոտիների պահանջների ապահովում և կանաչ տարածքների ընդլայնում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը և միևնույն ժամանակ, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները՝

առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ առանձնատնային կառուցապատման նոր բնակելի տարածքային հատվածների կազմակերպում,

հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում սպասարկման մատչելիության գոտիներում՝ ընդգրկելով նոր և գոյություն ունեցող կառուցապատումը, ճանապարհափողոցային ցանցի կատարելագործում կանաչ գոտիների ընդլայնում:

Բնակավայրի զարգացումը հիմնականում նախատեսվում է քաղաքի տարածքում անօգտագործելի հողատարածքների կառուցապատման միջոցով: Մ-2 մայրուղուն կից, նախատեսվում է հանգստի ռեկրեացիոն գոտու կազմակերպում, որտեղ կլինեն հիմնականում քոթեջներով և քոթեջատիպ հյուրատներով կառուցապատված տեղամասեր, սպորտային հրապարակներ և ժամանցի տարածքներ: Նոր ռեկրեացիոն գոտին տարանջատվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համայնքի ուսումնակրթական ոլորտը ներկայացված է համայնքում առկա 2 դպրոցով, 1 ավագ դպրոցով, համապատասխանում են հասանելիության շառավիղներին, և դպրոցականների ներկա քանակին: Դպրոց հաճախող աշակերտների թիվը ներկայումս 1359-է

Մանկապարտեզների քանակը 3 են, ինչը բավարարում է երեխաների ներկայիս քանակին: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 284-է:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է „Եղեգնաձորի համայնքային տնտեսություն „ ՀՈԱԿ-ի կողմից, որոնք ընդգրկում են 39 բազմաբնակարան շենք:

Վերջին տարիների ընթացքում համայնքում միջազգային և տեղական կազմակերպությունների և համայնքային ներդրումների միջոցով իրականացվել են մի շարք ծրագրեր:

Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ:

Նախագծի հիմնական նպատակն է համայնքի հեռանկարային զարգացման, տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության որոշումը՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հեռանկարային օգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Կապված գյուղատնտեսական հողերի հետ հեռանկարային զարգացման և կառուցապատման համար բարենպաստ նոր ռեզերվային տարածքները սակավ են: Վարչական սահմաններում ընդգրկված ռեկրեացիոն գոտին ունի ռեզերվային տարածքներ՝ ռեկրեացիոն օբյեկտների զարգացման համար: Ռեկրեացիոն տարածքներ կան նաև քաղաքի կառուցապատման սահմանում:

Ինչպես ամենուրեք Հայաստանում, այստեղ նույնպես շարունակվում է արտադրական տարածքների սեփականաշնորհման և վերապրոֆիլավորման գործընթացը: Մյուս կողմից այսօր, դեռևս բացակայում է տնտեսական առաջընթացի միասնական հեռանկարային ծրագրավորումը և առանձին ձեռնարկությունների բիզնես պլանավորումը: Այդ պատճառով հեռանկարային բնակչության որոշումը ընդունված՝ ավանդական մեթոդների աշխատանքային հաշվեկշռի, նպատակային կանխատեսումների և այլ մեթոդներ) կիրառմամբ այս փուլում դեռ հնարավոր չէ: Չնայած, ներկայումս քաղաքի բնակչության հեռանկարային աճը որոշելու համար առաջնային են դառնում տարածքային զարգացման հնարավորությունը և ժողովրդագրական տարողունակության որոշումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, համայնքի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը ընդունվել է՝ 12 հազար մարդ, որը սահմանվել է «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» ի նկատի ունենալով տարածքի դեմոգրաֆիական լրիվ տարողունակության պայմանը: Միևնույն ժամանակ, քաղաքի բնակչության առավելագույն քանակի ապահովման համար ժամկետների նախատեսումը, կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Հատակագծատարածական զարգացման գաղափարի հիմնական կորիզն է հանդիսանում՝ քաղաքում նոր զարգացած համաքաղաքային կենտրոնի կազմավորումը: Այստեղ պետք է տեղադրվեն բարձրակարգ հյուրանոցային և հասարակական սպասարկման օբյետներ, որոնք նախատեսվում են ոչ միայն տեղական բնակչության, այլ նաև բազմաթիվ հանգստացողների և զբոսաշրջիկների համար: Այս գաղափարը եղել է նաև նախորդ գլխավոր հատակագծերում, և նոր համաքաղաքային կենտրոնի համար ռեզերվացված տարածքները հիմնականում դեռևս չեն իրացվել:

Հատակագծային կառուցվածքը և գործառական գոտևորումը մշակվել են բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման, ինժեներական նախապատրաստման միջոցառումների իրականացման փոխկապակցված խնդիրների համընդհանուր լուծումներով՝ համայնքի տարածքի նպատակաուղղված քաղաքաշինական կազմակերպմամբ: Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման ենթակա տարածքները և որոշվել են այդ տարածքների կառուցապատման համար բարենպաստության աստիճանը, տրվել են պահանջվող ինժեներական նախապատրաստման միջոցառումները և դրանց իրականացման ուղիները:

Ճանապարհների, զերեզմանների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով վերափոխվում են բուֆերային գոտիների, որտեղ մինչև հաշվարկային ժամկետի

ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքները:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Մշակվել են Եղեգնաձորի հատակագծային - տարածական զարգացման հիմնական ուղղությունները և առանձնացվել են տարածքի նպատակային օգտագործման ռեժիմները: Առավելագույնս կանոնակարգվել է քաղաքի հատակագծային կառուցվածքը այն է՝ թաղամասերի հասարակական օբյեկտների հավասարակշռված բաշխում, փողոցային ցանցի ձևավորում, հասարակական կանաչի ապահովում, ներքին տարածքների համապատասխան գործառական նշանակության սահմանում: Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքի տարածքում առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները.

փողոցային ցանցի կատարելագործում, տարածքում հասարակական սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով բնակելի թաղամասերը ռեկրեացիոն գոտիների ձևավորում,

Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

կառուցապատման խտությունների կանոնակարգում, ներքին ռեզերվային տարածքների քաղաքի միասնական հատակագծային կառուցվածքում ընդգրկում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում, սանիտարական գոտիների պահանջների պահպանում և կանաչ գոտիների ընդլայնում, սեյսմիկ վտանգի, սողանքների պայմաններում քաղաքի կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

Անասնապահական ֆերմաների և ձկնաբուծարանների տարածքները նախատեսվում է վերակառուցել, պահպանելով պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտի:

Նախագծով նախատեսվում է ընդլայնել համայնքի կանաչապատ տարածքները: Գլխավոր հատակագծով ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմատիվ պահանջը կազմում է 34 հա, որը նախատեսվում է իրականացնել կենտրոնական հատվածում նախատեսվող հասարակական գոտու կանաչապատման հաշվին, ինչպես նաև կառուցապատմանը հարող լեռնալանջերի ստորոտներին: Ստորև աղյուսակ 8-ում երևում է Եղեգնաձոր համայնքի կանաչ տարածքների հեռանկարային բաշխումը,

Աղյուսակ 8

| Հ/Հ | Կանաչապատ տարածքների նկ րագիր | Տարածք /հա/ |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ | 34 |
| 2 | Սանիտարական կանաչապատում, զերեզման | 7.2 |
| | Ընդհանուր | 41.2 |

**1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները**

Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանման հիմք են հանդիսանում գլխավոր հատակագծի նախագծի հիմնադրույթները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն կատարված գոտևորումը:

Գոտիներն առանձնացվել են հաշվի առնելով հողամասերի նպատակային նշանակությունը, ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումները, հողամասերի գործառական տարածքային միավորները, դրանց թույլատրելի հողօգտագործման ձևերը և կառուցապատման չափորոշիչները՝ փուլ առ փուլ կառուցապատման, ինչպես նաև տարածքի բազմաբնույթ օգտագործումը խրախուսելու, համայնքային նշանակության համալիրների տեղաբաշխումն ապահովելու, նախագծվող համալիրները բնական միջավայրում ներդաշնակորեն ինտեգրելու համար:

**Նախագծով սահմանված գոտիները.**

Նախագծով սահմանված են հետևյալ գործառական գոտիները.

**Անհատական բնակելի կառուցապատման գոտի (ԱԲԿԳ)**

Այս գոտին առանձնացվում է ներկայումս կազմավորված և նախատեսվող առանձնատնային կառուցապատում ունեցող բնակելի տարածքների շինարարության և վերակառուցման համար:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում.

Կառուցապատման ծավալատարածական չափորոշիչները բերված են Աղյուսակ 2-ում.

Նոր կառուցապատվող հողամասի նվազագույն մակերեսը՝ 500 քառ.մետր.

**Բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտի (ԲԿԳ)**

Այս թաղամասերը նախատեսվում են քաղաքի կենտրոնական միջուկում հողի արժեքի բարձրացմանը զուգընթաց հողն առավել արդյունավետ օգտագործելու (բարձր խտությամբ կառուցապատման իրականացմամբ), ինչպես նաև քաղաքային միջավայրին հատուկ բնակելի կառուցապատման զարգացմանը նպաստելու և խրախուսելու համար:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում :

**Հասարակական և վարչակառավարչական գործառույթների գոտի (ՀԳՎԳ)**

Գոտին նախատեսվում է հասարակական օգտագործման տարածքների կառուցապատման, համայնքի կենտրոնական միջուկի կառուցապատման կանոնակարգման և հավուր պատշաճի զարգացման համար:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում:

**Հասարակական օգտագործման կանաչ գոտի (ՀՕԿԳ)**

Հասարակական օգտագործման կանաչ գոտիների տարածքներն ընդգրկում են նչգեպուրակները և այլ հասարակական օգտագործման կանաչ տարածքները:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում.

**Արտադրական գոտի (ԱԳ)**

Այս գոտին նախատեսվում է համայնքի տարածքում կազմակերպվող արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում.

**Հատուկ պահպանման գոտի (ՀԳ)**

Այս գոտին նախատեսվում է հուշարձանների պահպանության, ռեկրեացիոն, անտառպուրակների, ազգային պարկի գոտիների կազմակերպման տարածքներ ապահովելու համար:

Թույլատրված օգտագործման ձևերը բերված են Աղյուսակ 1-ում

**Արտաքին տրանսպորտի գոտի (ԱՏԳ)**

Միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմանապարհները, իրենց հարող տարածքները քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ են:

Կառուցապատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշմամբ սահմանված կարգով:

**Բնապատկերային գոտի (ԲԳ)**

Բնապատկերային գոտին ընդգրկում է քաղաքի տարածքի խոշոր այգիները, գյուղատնտեսական հողերը, այգեպուրակային և ջրային տարածքները, բոլոր պահպանվող և վերականգնվող լանդշաֆտները և հանդիսանում է քաղաքի բնապատկերների պահպանման հիմնական միջոցը:

**Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների գոտի (ԿՈՄ)**

Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների գոտում ընդգրկված է համայնքում գտնվող հեղեղատար ու կենցաղային կոյուղու, ջրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և կապի ցանցերի զբաղեցրած տարածքները:

**Հատուկ նշանակության (ՀՆԳ)**

Հատուկ նշանակության գոտիները առանձնացվում են գործունեության հատուկ ռեժիմ (զորամասեր) պահանջող տարածքների համար:

*Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) ձևերը*

Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ (Աղյուսակ 1)

| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐ | ԱԿԳ | ԲԿԳ | ՀԲԿԳ | ԲԳ | ՀՕԿԳ | ՀԳ | ԱՏԳ | ԱԳ | ՀԴԳ | ՀՆԳ | ԿՈՄ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առանձնատներ տնամերձ հողամասերով՝ | ◎ | | | | | | | | | | |
| Բազմաբնակարան տներ | | ◎ | ◎ | | | | | | | | |
| Հյուրանոցներ (մինչև 200 տեղ) | | | ◎ | | | | | | | | |
| Մոթելներ (առանց սահմանափակումների) | | | ◎ | | | | | | | | |
| Ճանապարհամերձ տներ | ◎ | | | | | | | | | | |
| Հյուրանոցներ, մոթելներ, (սահմանափակ կոնտինգենտով) | ◎ | ◎ | ◎ | | | | | | | | |
| Մանկապարտեզներ, մանկամսուրներ | ◎ | ◎ | ◎ | | | | | | | | |
| Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ | | | | | | | | | | | |
| Միջնակարգ դպրոցներ | ◎ | ◎ | ◎ | | | | | | | | |
| Անհատական գրասենյակներ (օֆիսներ), | ◎ | ◎ | ◎ | | | | | | | | |
| Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատություններ, դրանց գրասենյակներ | | | ◎ | | | | | | | | |
| Փոստատներ, Կապի բաժանմունքներ, | | | ◎ | | | | | | | | |
| Ոստիկանական տեղամասեր | | | ◎ | | | | ◎ | | | | |
| Վարսավիրանոցներ, | ◎ | ◎ | ◎ | | | | ◎ | | | | |
| Քիմմաքրման ընդունման կետեր, Լվացքատներ, | | | ◎ | | | | | | | | |
| Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ, | ◎ | ◎ | ◎ | | | | | | | | |
| Եկեղեցիներ, Մատուռներ, | | | | | | | | | ◎ | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ կառույցներ եկեղեցականների համար, | | | Թ | | | | | | Թ | | |
| Գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերա-սրահներ, արվեստի սրահներ, | | | Թ | | | | | | | | |
| Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ,գիշե րային ակումբներ, | | | Թ | | | | | | | | |
| Թատրոններ և կինոթատրոններ, | | | Թ | | | | | | | | |
| Բուսաբանական, կենդանաբանական, մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ, | | | | | Թ | | | | | | |
| Կեգլախաղարաններ, սեղանի թենիս, բիլյարդի դահլիճներ, ճաղգադահլիճներ, | | | | | Թ | | | | | | |
| Խաղադաշտեր, | | | | | Թ | | | | | Թ | |
| Մարզադաշտեր, | | | | | Թ | | | | | Թ | |
| Բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, լողի, թենիսի և այլ ակումբներ, | | | | | Թ | | | | | | |
| Պուրակներ անիվավոր չմուշկների և այլնի համար, | | | | | Թ | | | | | | |
| Հրաձգարաններ (տիրեր) | | | Թ | | Թ | | | | | | |
| Սուպերմարքեթներ և հանրախանութներ, | | | Թ | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առևտրի կենտրոններ | | | @ | | | | | | | | |
| Մանրածախ առևտրի, խանութներ, տաղավարներ, կրպակներ, | @ | @ | @ | @ | @ | | | | | | |
| Ավտոպահեստամասերի վաճառք, | | | @ | | | | @ | | | | |
| Տնավաճառներ, ֆերմերային շուկաներ՝ բացառությամբ կենդանիների վաճառքի, | | | @ | | | | | | | | |
| Կենդանի ծկների վաճառք, | | | @ | | | | | | | | |
| Բացօթյա մեծածախ, մանրածախ առևտուր, | | | @ | | | | | | | | |
| Ավանդական ուտեստների խոհանոցներ, պանդոկներ, խորտկարաններ, ճառաններ, ճաշարաններ, | | | @ | | | | | | | | |
| Ռեստորաններ ոչ ավելի քան 20 նստելատեղով, | @ | @ | @ | | | | | | | | |
| Սրճարաններ և բարեր ոչ ավելի քան 20 նստելատեղով, | @ | @ | @ | | @ | @ | | | | | |
| Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (առանց սահմանափակումների), | | | @ | | | | @ | | | | |
| Բացօթյա ռեստորաններ, բարեր, | | | @ | | @ | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| սրճարաններ, | | | | | | | | | | | |
| Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ: | Թ | Թ | Թ | Թ | Թ | Թ | Թ | | | | |
| Արտադրական մասնաշենքեր | | | | | | | | Թ | | | |
| Փոքր բիզնեսի արտադրություննե ր, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի և մթնոլորտի աղտոտման (ծուխ, գազեր) հետ | | | | | | | | Թ | | | |
| Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների (բացի մսի) արտա-դրություն, | | | | | | | | Թ | | | |
| Տնայնագործական արտադրություն, սեփական արտադրանքի առևտուր, | Թ | | | | | | | Թ | | | |
| Արհեստագործակա ն և արտադրամասեր և արհեստանոցներ (ավան-դական իրերի արտադրություն), | Թ | Թ | | | | | | Թ | | | |
| Պահեստներ | | | | | | | | Թ | | | |
| Գերեզմանատներ: | | | | | | | | | Թ | | |
| Ավտոբուսային կայարաններ, | | | | | | | Թ | | | | |
| Տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, | | | | | | | Թ | | | | |
| Բենզալիցքավորման կայաններ, | | | Թ | | | | Թ | Թ | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ավտոկանգառներ, | | | | | | | ☑ | ☑ | | ☑ | |
| Ավտոտնակներ | ☑ | ☑ | | | | | ☑ | ☑ | | | |
| Գյուղատնտեսակա ն աշխատանքներ (այգեգործություն), | ☑ | | | | | | | | | | |
| Կրպակներ, | ☑ | ☑ | ☑ | | | ☑ | ☑ | ☑ | | | |
| Տաղավարներ, | ☑ | ☑ | ☑ | | ☑ | ☑ | ☑ | ☑ | ☑ | ☑ | |
| ճարտարապետական փոքր ձևեր: | ☑ | ☑ | ☑ | | ☑ | ☑ | ☑ | ☑ | ☑ | ☑ | |
| Ինժեներական ենթակառուցվածքներ | | | | | | | | | | | ☑ |

թույլատրված օգտագործման ձևեր՝ ☑

չի թույլատրվում ☐

## 2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

**Արտաքին տրանսպորտ**

Եղեգնաձորը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան հատվածում և հանդիսանում է Վայոց Ձորի մարզկենտրոնը:

Քաղաքով անցնում է միջպետական նշանակության Մ-2 ճանապարհը:

Եղեգնաձոր քաղաքից դուրս են գալիս երկու տեղական նշանակության ճանապարհներ՝ դեպի հարևան գյուղերը:

Մոտակա օդանավակայանը Երևանի Զվարթնոցն է, 132 կմ հեռավորությամբ: Խորհրդային իշխանության օրոք գործում էր Եղեգնաձորի օդանավակայանը, որն ուներ գրունտային թռիչքուղի, որտեղից իրականացվում էին տեղական թռիչքներ: Սակայն անկախացումից հետո այդ օդանավակայանը բարձիթողի վիճակում է և առանց լուրջ վերականգնման աշխատանքների գործել չի կարող:

Քաղաքը ավտոբուսային երթուղիներով կապված է հանրապետության շատ բնակավայրերի հետ, քանի որ այն տեղավորված է մայրուղային ճանապարհների հանգույցում:

**Ներքին տրանսպորտ**

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը 111 կմ է, որից ասֆալտապատ 42կմ , մնացածը գրունտային է: Փողոցների մակերեսը 71,8 հա է: Համայնքի կենտրոնի փողոցները գտնվում են բարեկարգ վիճակում: Համայնքում կան 6 կամուրջներ, որոնք ունեն ամրացման և վերանորոգման կարիք:

Ազգաբնակչության կապը Երևան քաղաքի և տարածքշրջանի համայնքերի հետ իրականացվում է տաքսիների և կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող մասնագիտացված կազմակերպության միջոցով:

Համայնքի տարածքում գործում է 5 տաքսի ծառայություն, որոնց ծառայությունները բավարարում է ազգաբնակչության կարիքները: Փողոցներում տեղադրված է բավարար քանակի ճանապարհային երթևեկության նշաններ, կենտրոնական փողոցները նշագծված են: Համայնքի երկու խաչմերուկներում գործում է լուսային կազավորիչներ: Տեղադրված նշանները բավարարում են համայնքում անվտանգ երթևեկություն կազմակերպելու համար:

Համաքաղաքային նշանակության փողոցային ցանցի երկարությունը կազմում է 7.5կմ:

## 3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

**ԼԱՆԴՇԱՖՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ**

Բնական կամ արհեստական լանդշաֆտի պահպանության գոտիների սահմանումը նպատակ ունի պահպանել պատմական բնակավայրերի քաղաքաշինական հորինվածքի կամ հուշարձանների բնապատմական արժեքավոր լանդշաֆտը:

Լանդշաֆտի պահպանման գոտիների սահմանումը նպատակ ունի բնական կամ արհեստական ռելիեֆի և դրա լանդշաֆտի պատմական տեսքի պահպանումը կամ վերականգնումը:

Նորակառույցների ճարտարապետական լուծումները ամեն առանձին դեպքում պետք է թելադրվեն տվյալ միջավայրի պատմա-ճարտարապետական պահանջներով:

Հնագիտական հուշարձանների պահպանության գոտիների տարածքներում կատարվում են բացառապես հուշարձանների հետախուզական աշխատանքներ և հնագիտական պեղումներ: Այդ աշխատանքները կատարվում են պատմության, հնագիտության, ճարտարապետության, արվեստի պատմության, ազգագրության և այլ բնագավառներում գիտության զարգացման, ինչպես նաև հուշարձանների ամրակայման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նախագծեր կազմելու նպատակով: Հուշարձանների հետախուզումը և հնագիտական պեղումներն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

Պահպանության գոտիներում և նրանցից դուրս ամրագրվել են պոտենցիալ պեղման գոտիները: Նշված տարածքներում պեղման աշխատանքների շնորհիվ հնարավոր կլինի հայտնաբերել պատմական անցյալը: Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հնագիտական հուշարձաններին հարող տարածքները:

Պոտենցիալ պեղման գոտիների տարածքներում շինարարական և այլ տեսակի աշխատանքների համար հողհատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների ինչպես նաև պահպանության գոտու օբյեկտների զարգացմանն ու սպասարկմանն ուղղված գործունեության նպատակով նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Այդ նախագծերի առաջադրանքներում անհրաժեշտ է նախատեսել հետախուզման աշխատանքներ:

Եթե հողային աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող պատմական շերտի պահպանությունն ու անվթարությունը, ապա, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցով իրագործվում են դրանց պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ:

Լիազորված մարմնի թույլտվությամբ և հսկողությամբ իրականցվում են հետախուզություն, պեղման, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխման կամ լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

Առանձնացված փոքրածավալ, ոչ ակտիվ հորինվածք ունեցող հիմնականում արվեստի հուշարձանների ու քարայր-կացարանների պահպանության գոտիները նախագծում չեն ամրագրվել:

Մինչ այդ աշխատանքների կատարումը վերոհիշյալ հուշարձանների հարող տարածքներում որևէ քաղաքաշինական, տնտեսական, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել լիազորված մարմնի թույլտվությամբ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 13*

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.81555ՀԱ ԵՎ 1.02413ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0383-0170 ծածկագրով , 0.81555 հա մակերեսով և 10-001-0383-0171 ծածկագրով , 1.02413 հա մակերեսով , նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքները մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :
2. Մեկնարկային գին սահմանել համապատասխանաբար 183500 և 230430 ՀՀ դրամ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6.. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ [illegible]

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

### *ՈՐՈՇՈՒՄ*

*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 14*

### *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00201ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0030-0055 կադաստրային ծածկագրով , 0.00201 հա մակերեսով ,Վ.Գևորգյան փողոց 5/2/1 հասցեում գտնվող, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով Սամվել Մնացականյանին վաճառելու :
2. Վաճառքի գին սահմանել 24965 ՀՀ դրամ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱԾ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 15*

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0036 ՀԱ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0140-0050 կադաստրային ծածկագրով , 0.0036 հա մակերեսով , Կամոյի փողոց 1/7/1 հասցեում գտնվող , նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի , գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասը աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :
2. Մեկնարկային գին սահմանել 44712 ՀՀ դրամ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱԾ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 16*

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0054 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0140-0049 կադաստրային ծածկագրով , 0.0054 հա մակերեսով , Կամոյի փողոց 1/6/1 հասցեում գտնվող , նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի , գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասը աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :
2. Մեկնարկային գին սահմանել 67068 ՀՀ դրամ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱՀԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*ՈՐՈՇՈՒՄ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 17*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.06646 ՀԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Վիկտոր Համբարձումյան փողոց 3/1 հասցեում գտնվող , 10-001-0188-0004 կադաստրային ծածկագրով, 0.06646 հա մակերեսով ,նպատակային նշանակությունը՝բնակավայրերի , գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածքն աճուրդ-վաճառքով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը:
2. Մեկնարկային գին սահմանել 412716 ՀՀ դրամ :
3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 09.12.2016թ-ի թիվ 62 որոշումը :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՐԱՏ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԻՈՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 18*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.32859ՀԱ ԵՎ 0.14258 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 21-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0383-0168 ծածկագրով, 0.32859 հա մակերեսով և 10-001-0383-0169 ծածկագրով , 0.14258 հա մակերեսով , նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքները մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :
2. Մեկնարկային գին սահմանել համապատասխանաբար 73933 և 32080 ՀՀ դրամ :
3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 09.12.2016թ-ի թիվ 64 որոշումը :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՌՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ [illegible]

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 19*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.1403 ՀԱ ԵՎ 1.77803 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0302-0001 ծածկագրով , 0.1403 հա մակերեսով և 10-001-0303-0001 ծածկագրով , 1.77803 հա մակերեսով , նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքները մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :
2. Մեկնարկային գին սահմանել համապատասխանաբար31568 և 400056 ՀՀ դրամ :
3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 09.12.2016թ-ի թիվ 65 որոշումը :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ [illegible]

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 20*

*ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԾՆՆԴԱՏԱՆԸ 2017Թ. ՄԱՐՏԻ 8-ԻՑ ԱՊՐԻԼԻ 7-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 10 խումբ 7 դաս 1 սոցիալական պաշտպանություն ՝ սոցիալական հատուկ արտոնություն /այլ դասերին չպատկանող /ոլորտի այլ նպաստներ բյուջեից հոդվածից/ հոդված 4729/ , կանանց և մայրության տոների կապակցությամբ եղեգնաձորի ծննդատանը ծնված յուրաքանչյուր երեխային որպես օգնություն հատկացնել 5000 դրամ գումար:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱԾ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՐՅԱ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*21 ՄԱՐՏԻ 2017թվականի N 21-Ն*
*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Տալ համաձայնություն համայնքային բյուջեի հանգիստ և սպորտի ծառայություններ բաժին 8 խումբ 1 դաս 1 ոլորտի նախահաշվի ներքին գործողումներ հոդվածում /հոդված 4221/ կատարել վերաբաշխում ՝ կարդալով .

- I եռամսյակ 775 հազ. դրամ
- II եռամսյակ 1200 հազ. դրամ
- III եռամսյակ 1200 հազ. դրամ
- IV եռամսյակ 1200 հազ. դրամ

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*17 ՄԱՐՏԻ 2017թվականի N 22*

*ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ,, ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԿՏ,, ԲԲԸ - Ի ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , 42-րդ հոդվածի պահանջներով և նկատի ունենալով , որ համայնքը հանդիսանում է ,,Եղեգնաձորի ԲԿՏ,,ԲԲԸ -ի 34% բաժնետեր .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի ասֆալտ տարածքների սանիտարական մաքրումն ու աղբահանությունը իրականացնել ,,Եղեգնաձորի ԲԿՏ,, ԲԲԸ -ի միջոցով :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
8. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
10. ՍՄԲԱՏՅԱՆ [illegible]

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*